

ԵՐՎԱՆԻ ՇԱՀԱԶԻԶ

(Ծնվ. 1856 թ.)



ազմաստակ գրականագետ ու պատմաբան և երկարամյա մանկավարժ Երվանդ Շահազիզը բնությունից իր կյանքի 90 տարին և գործունեության 65-ամյակը նրանից Հովակիմի Շահազիզը ծնվել է

ցիչ, ապա որպես տեսչի օգնական և տեսչի

Մանկավարժական գործունեության զուգընթաց Երվանդ Շահազիզն զբաղվում է հայ գրականության և հայ ժողովրդի պատմության հարցերով: Մ. Նալբանդյան, Ռ.



Ֆիլոլոգ. գիտ. դոկտոր ԵՐՎԱՆԻ ՇԱՀԱԶԻԶ

1856 թ. հունվարի 13-ին Աշտարակ գյուղում: Գրագիտությունը սովորել է տանը՝ մորից, ապա մտել Երևանի Գավառական դպրոցը: 1870 թվին, իր հորեղբայր՝ անվանի բանաստեղծ Սմբատ Շահազիզի ջանքերով, Երվանդն ընդունվում է Մոսկվայի Լազարյան ճեմարան, իբրև գիշերօթիկ սան: 1879 թվին ավարտելով ճեմարանի միջնակարգ դասընթացն այնուհետև շարունակում է կրթությունը Լիկեոնում, որը և վերջացնում է 1882 թ.: Նույն թվականին նշանավոր մանկավարժ Առաքել Բահաթրյանի հրավերով նա մեկնում է Նոր-Նախիջևան որպես ուսուցիչ տեղի թեմական դպրոցում: Այստեղ նա պաշտոնավարում է 35 տարի շարունակ, նախ իբրև ուսու-

Պատկանյան, Մ. Էմին, Խորեն Գալֆայան, Դ. Պատկանյան, — ահա շարքն այն անունների, որոնք զբաղեցնում են մեր բանասերին: Բայց այդ անուններից և ոչ մեկը հիշյալ ժամանակահատվածում և զրանից էլ հետո այնքան չեն զբաղեցրել Շահազիզին, նրանից այնքան սեր, եռանդ ու ջանք չեն խլել, որքան մեծ հրապարակախոս Միքայել Նալբանդյանը: Եվ դա հատկապես այն ժամանակ, երբ Նալբանդյանի անունը տալիս իսկ պաշտոնապես արգելված էր, երբ նրա գործերից շատերը գրաբնական կալանքի տակ էին գտնվում:

1897 թ. Մոսկվայում լույս տեսավ Ե. Շահազիզի «Միքայել Ղազարյան Նալբանդյան» աշխատությունը, որն իր ժամանակի համար մի խոշոր երևույթ էր և առա-

շին ծավալուն ուսումնասիրությունը մեծ հրապարակախոսի կյանքի ու գործունեության մասին:

Բարձր դնահատելով վաստակավոր բանասերի և մանկավարժի կատարած աշխատանքները՝ Նոր-Նախիջևանի հասարակությունը 1917 թ. կատարում է Ե. Շահազիզի գրական-մանկավարժական գործունեության 35-ամյա հոբելյանը:

Հայաստանում Սովետական կարգերի հաստատումով նոր շրջան է սկսվում Ե. Շահազիզի գործունեության մեջ:

Հայկ. ՍՍՌԻ Լուսժողովրդապետի հրավերով 1922 թ. Երվանդ Շահազիզը փոխադրվում է Երևան: Այստեղ մինչև 1930 թ. Շահազիզը վարում է իր նախաձեռնությամբ հիմնված Գրական Թանգարանի վարչի պաշտոնը, որի ընթացքում նա հավաքակալ հսկայական աշխատանք է ծավալում՝ թանգարանում կուտակելով մեծ նոր գրականության պատմությանը վերաբերող հարուստ և մեծարժեք արխիվներ, դարձնելով այդ հիմնարկը հայ կուլտուրայի կարեւորագույն օջախներից մեկը:

Այսպես է սկսվում Ե. Շահազիզի գործունեության նոր և առավել բեղմնավոր շրջանը:

Սովետական շրջանում Շահազիզը հատկապես աչքի ընկնող աշխատանք կատարեց դարձյալ իր գրադմուքի հիմնական առարկայի՝ Միքայել Նալբանդյանի, ինչպես նաև Արծրյանի, Պատկանյանի, Սունդուկյանի կյանքի հետ կապված նոր ու արժեքավոր դոկումենտներ հայտնաբերելու, հետազոտելու, մշակելու և հրապարակ հանելու ուղղությամբ: Այնպիսի աշխատություններ, ինչպես՝ «Նոր-Նախիջևանը» (1903 թ.), «Նալբանդյանի դիմանք» (1932 թ.), «Արծրյանի դիմանք» (1940 թ.), «Հին Երևանը» (1931 թ.) և նորերս լույս տեսած «Խաչատուր Արծրյանի կենսագրությունը» մեծարժեք ուսումնասիրությունը, «Սմբատ Շահազիզի կենսագրությունը», Պատկանյանի դեռևս անատիպ «Դիմանք», «Աշտարակի պատմությունը», «Զեքեղազյանների պատմությունը»,

վերջերս միայն ավարտած «Արծրյանի դիմանք» երկրորդ հատորը և այլն, այս բոլորն անդնահատելի դանձեր են մեր դրականության ու պատմության ներկա և ապագա ուսումնասիրողների համար:

1944 թվին Հայկ. ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի միջնորդությամբ Երվանդ Շահազիզին տրվեց ֆիլոլոգիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ուսանց դիսերտացիայի պաշտպանություն:

Իր բեղմնավոր կյանքի երկար ճանապարհին շփվելով հայ գրական ու հասարակական կյանքի անցյալ էտապների ականավոր ներկայացուցիչների հետ Երվանդ Շահազիզն այսօր մեր առաջ կանգնում է իրեն մի պատկանելի և կենդանի հիշատակարան, լի մեր մեծ ու բեղմնավոր անցյալի հարուստ բովանդակությամբ:

Լազարյան ճեմարանում սովորելիս և հետագա տարիներին նա ապրել և շնչել է Ստեփանոս Նազարյանի, Սմբատ Շահազիզի, Էմինի և սրանց մեծազույն ժամանակակիցի՝ թեև ֆիզիկապես բացակա, բայց իր էությունը միշտ կենդանի ու ներկա՝ Նիքայել Նալբանդյանի գաղափարական միևնույնությամբ: Այնուհետև Երվանդ Շահազիզն իր կյանքի գործունեության անցած ճամապարհին հանդիպումներ ու շփումներ է ունեցել Ռ. Պատկանյանի, Պ. Պոսյանի, Դ. Աղայանի, Բաֆթու, Հ. Հովհաննիսյանի, Ա. Մատուրյանի, իսկ ավելի ուշ Հ. Թումանյանի, Վ. Փափազյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի և շատ ուրիշների հետ:

Երվանդ Շահազիզը այն տոկուն և եռանդուն գործիչներից է, որոնց համար ծեղրություն և հոգնություն հասկացողությունները կարծեք գոյություն չունեն: 96 ամյա պատկառելի դիտելական այսօր էլ ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի՝ Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտի երիտասարդ և տարիքավոր գիտաշխատողների մեջ քայլում է առաջին շարքերում և տոկունության ու աշխատասիրության օգինակ տալիս շատերին:

Զերմագին ողջո՞ւյն մեր ալեհեր հոբելյանին:

(Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիա, Մ. Արեղյանի անվան Գրական ինստիտուտ)